

Այս ատեն՝ կանգուն մնաց զրան նայելով, միանդամայն զար-
մացած որ արգէն այդպէս շուտ լմնցել է Ռաքովը դպաւ, «ը-
րունկներէն մին վեր վերուց և յետոյ վար ձգեց, վրան նըս-
տաւ և աչքերը արօտին սհեռած մնաց՝ պառանց մէկ բանի վե-
րայ խորհելու։

Վերադառնարով կառուած՝ մարդու բան չասաց, քանզի կ'ուս
զէր տակաւին թափառիլ՝ ձիուն արօտատեղին փոխելու ժամե-
րուն։

Հետեւալ օրը գնաց ձիուն տեսութեան. երբ մօտիկցաւ, ագ-
ռաւներ վեր թռան, Անթիւ ճանճեր կը շրջէին ձիուն մարմնոյն
վերայ և շուրջը կը բզզային։

Ճուն գառնարով՝ հանդիպածը իմացուց։ կենդամին այն աս-
տիճանի ծեր էր որ ոչ ոք չզգարմացաւ։

Տէրը ասաց երկու հատ ծառայի. — Առելք բահերդ և փոս փո-
րեցէք նոյն խոկ այն տեղը ուր Քօքօ ընկած է։

Եւ մարդիկ թաղեցին ձիուն՝ ճիշտ այն տեղը ուր անօթու-
թենէ մեռած էր։

Խոկ արօտը, խեղճ կենդանւոյն մարմնէն սնունդ առնելով՝
րուսաւ անդ պարարտագոյն, խիտ առ խիտ և գալարագեղ։

ԹԱՐՓ. Ա. Ռ. ԲԻՄԱՑՆԱՆ

Գիշ դը Մօպասան

ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՓՐԻԿԵՒ

ԱԴԱՄԱՆԴԻ ՀԱՆՔԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿ հարաւային Ափրիկէի շարքը և սակաւ ինչ հեռի 'ի ծով-
եզերաց՝ բարձրաբերձ և սրածայր լերանց շղթայ մը կը պատէ, յոր սա-
կաւաթիւ են անցը՝ աստի անոր Քարոս դաշտագետինը կը տարածուի, ո-
րոյ բարձրութիւնն յերեսաց ծովու 4100—4300 մէտր է։

Այս երկրին մէջ նշանագելի բան է ջրոյ բացարձակ պակասութիւնը.
Ժիայն հիսխայյին գաւառները կը թընեն Օրանժ, վաալ և Մոտտէր գե-
տակները. ճմեռ ժամանակ երգեմն այնքան չափազանց ձիւն կը տեղայ՝ որ
մեծամեծ աղիսից պատճառ կ'ըլլայ։ կենդանիք՝ մասնաւորապէս ոչխարը,
որոց բուրգն անդ բնակեալ Հովանտացոց լաճառականութեան զիխաւոր առար-

կայն է, կը հանդիպի որ երբեմն քանի մը որ յաջորդաբար անօթութենէ հազարաւորք կը մեռնին:

Օգդէնզացիք այսօր յոյժ սակաւածիւ են. ընդհակառակն կը բազմանան Հոլանդացիք, որ ահազին ընդարձակութեամբ երկիրներ կ'ստանան. յորոց մի քանին 20 կամ 30 հազար եկտար ապահովաթիւն ունի. այս գաղթականց իրենց բնաւորութիւնն և սափողոյթք անփոփոխ պահեր են ցարդ. կատաղաբար կը սիրեն զանկախութիւնն է այն կղզիացումը՝ որ զայն իրենց կ'ապահովէ. սասարկ կ'ասե՞ն ո և է կերպիւ սատիկանութիւնը կամ հսկողութիւնը.

Ահա, այս է երկիրն՝ որ Դյուքոնի հրուանգանէն ապամանզի հանքերն գացողը պէտք է կտրէ անցնի:

1867ին՝ այն թափառական վաճառականաց մին՝ որոնք 'ի տասուերկու եզանց ձգեալ կառուով մը՝ գաւառէ 'ի գաւառ կը շրջէին բնակչաց կերպար և այլ զանազան նիփթեր վաճառելով, այս վաճառականաց մին վասարի գետափունքը գտնուելով՝ պատիկ տղու մը ձեռքը բիւրեղացեալ, թափանցիկ և փայլուն քարի կտոր մը աեսաւ: Առաւ զայն ձեռքէն և տուն դանալով՝ իրման հետարրիբական առարկայ մը զայն իր բարեկամաց ցոյց տուաւ. ատնցմէ մին՝ արթ. Աղջէրազոն՝ 'ի Գոյլիզպէրիկ՝ որ քիչ մը տեղեակ էր հանգարանութեան՝ խսկյն ճանցառ որ այն քարն ապամանգ էր, այս վկայութիւնն յետոյ 'ի հմասագունից հաստատուեցաւ, և հետեաբար բարեյուայ զինոյ գաւառապետը զայն 500 սպէրիինի գնեց: Նոյն տարւոյն Բարիզու Աշխարհանդիսին մէջ՝ 'ի ցոյց զրուեցա այս քարը:

1868ին՝ մե մը չի գիտացուիր ուրաւեղէն գասաւ և շափաւոր գնով վաճառեց «աստղ Հարաւային Առիրիկէն» կողուած հոչակաւոր ապամանը, որ 449 քարադ կը կուէ. շատ ձեռքէ անցնելէն վերջը՝ գնեց զայն Լորտ 8ըալի 608,000 ֆունդի:

Այս կրկին գէպը՝ մեծ զարւանք պատճառեցին. անթիւ անհամար բաղակնդիր թափեցան, ուր եթէ քիչ մը մեծութեամբ քարի կտոր մը գրտնէին՝ իրենց բազզը կ'ապահովէին: Սակայն ճանապարհորդութիւնը շատ վրաւանգաւոր էր. կտաւով զոցուած կառքերով կ'ընէին, և պէտք էր ճանապարհորդութեան հարկաւոր եղած ամէն՝ ինչ՝ 'ի միասին տանէին. մասնաւորապէս ուտելիք. թէպէս ճանապարհին վրայ քաղաքներ կը գտնուին՝ սակայն՝ 'ի 5 կամ 600 անձանց բաղկացեալ աղքատ և խեղճ դիրքի մէջ. և յորս անկարիյի էր պաշար զանել: Մոտուէրի և վասարի ափունքն հասնելու համար՝ առ նուազն սւթը եօթնեակ հարկաւոր էր. ճանապարհորդութեան ձեռք զարնողներէն շատերը՝ իրենց նպատակին շասան:

Ճանապարհորդք և աղամանդ խնդրողք աեսնելով որ Մոտուէր գետակը անարդասաւոր էր՝ Վասարի ափանքն հաստատուեցան. Աւտորալիացիք որ մեծամասնութիւնը կը կազմէին՝ իրենց բնիկ երկրէն բերած հանքային բաժանման մասնաւոր դրութիւն մը կը գործածէին. claims կոչուած փարփի քա-

հակուսիներ կը նշանակէին այն տեղեաց վրայ՝ ուր արամանդարեր տաւազ կը դանէին. այս քառակուսիներն 84 մէտր մակերևոյթ ունէին. և խրաբան-շիր ոչ իւր բաժնին մէջ ըստ կամ կ'ապրէր իւր վրանին տակ :

Վասլի աւազակուտից աշխատութիւնը՝ նախ և առաջ շատ շահառոր եղաւ, և ցայսօր իսկ զեր բոլորովին երեսէ ձգուած չէ « Բայց յանվարծակի նորալուր մը տարածեցաւ. զբեթէ քառասուն միզոն դէա՛ ներո՛ խովարիւս ճանապարհորդ մը՝ Տիգուայդ ճանձին մօտ՝ բյրափի մը վրայ դիպուածով աղամանդի կոտր մը գոտու և բնականաբար խովարիւս բազմութեամբ դիմեցին անդ. բարսկ, կարմրագոյն և տեղ ալ կրային նիւթերով խառն աւազով ծածկուած երկրի մը տակ՝ զեղնագոյն և փիլոտուն հոզ մը գոնուեցաւ որոյ մէջ տղա-մանդը խառն կը գտնուէին քարի և մայորի կառուներու հետո այս երկրին վրայ մի խորանարդ մէտր աշխատուած նիւթը՝ շատ աելի ազամանդ կու տար քան թէ նոյն քանակութեամբ զետին աւազը :

Սակայն քարանոտը և աշխատաւորը կը կարծէին՝ թէ այս երկիրն ալ զեւեզերքի աւազոց նման՝ ի ջրասական մնացորդաց կը բաղկանար թէ-պէտ տաւազ չի կար, և բյրափի մը գագամին վրայ կը գանուէր այս աղա-մանդարեր երկիրը ամեններն հետք մը շտնենալով ու և իցէ գետի մը ան-կողնոյն բայց այս ամէնը նշանակութիւն մը չունէին մեղացի բնակչաց հա-մար. վասն զի սոքա լաւ գիտէին որ ՚ի Հնդիկն, ՚ի Պրազիլ, յլաւորալիս և նոյն խոկ ՚ի Պոռնէ՛ աղամանզը միշտ ջրասական երկիրներու մէջ կը գրտ-նուէր. հետևաբար շրջակայ երկիրներուն վրայ բազմամիշտ խովարիկութիւններ ըրին նախկին գետոց հետքերն և մեացորդներն գտնելու համար ու և այս ջանից փոխարէն գտան Գիմնզրըլէյի, Պուլթֆոնզէնի և Պիրսի հանքային խաերը :

Սակայն ինչ ալ բլլայ հանքաբանից կարծիքը այս նոր երկրին վրայ՝ սա-կայն նիւթական և շօշափելի ասպացոյց մը՝ կը գանազանէ զայն վասլի հանքերէն. այսինքն ջրոյ պակասութիւնը. այս պատճառաւ իսկոյն բարձրա-ցաւ անդ ջրոյ զինը անհաւատալի կերպով, և մեր զործածած զինէին աւե-լի սուզցաւ. այսինքն ջրոյ մի խորանարդ մէտրը կ'արծէր 300–400 ֆու:

1872ին սկիզբները այն աղամանդարեր երկիրներու մէջ սպիտակ ցեղէ 30,000 անձինք կ'աշխատէին՝ որոց պիտոյքը պէտք էր հողալ, այս վա-ճառականութեամբ պարապողք առանցքելալ գումարներ զիզեցին :

Այս ոճով հասաստուած գաղթականաւթիւն մը՝ ՚ի ձեռնարկելն զայս գործ շատ մը խնդիրներու ուշադրութիւն չէր ըրած. և մասնաւորապէս հետևեալ-ներուն. Այս երկիրը որո՞ւնն էր. Օրանժի անկախ պետութեան. Անզղիոյ. և կամ թէ արքեօք անկամն էր, զործաւորաց և տեարց փոյթը չէր. Օրանժի պետութիւնը՝ իւր զրօշն անդ հաստատեր էր առանց զինուարական գրաւման կամ օժանդակութեան. Անզղիա մեծապէս մասսակար համարեցաւ՝ պյախիս կարեոր հանք մը՝ մերձաւոր պետութեան մը տիրապետութեան տակ թո-դուլը, և խնդիրը իւր ոճովի վերջացուց. 1874 նոյեմբերի երեսնիւ շափ

սատիկանութեան պահապաններ անդ զրկելով՝ որոց գալստեանն անձկութեամբ կըսպասուէր։ Այսք հազի թէ հասան՝ իսկոյն Օրանժի գրօշը վերցուցին և անզղիականը բարձրացուցին։ յետ բազմաթիւ և ազգու բողոքներու՝ գաղթային կառավարութիւնը կեղծեց թէ կրնայ ըլլալ որ սահմանագլխայ որոշման միալ մը եղած ըլլայ։ Բայց գործը արդէն լմցեր էր և նորա պատճառած շահներն և առաելութիւններն պէտք չէր այնպէս շուտով ձեռքէ հանել։ Ուստի Օրանժի ազատ Պետութեան 90,000 սգերինի հաստոցում մ'ըրաւ. և անա այսպէսով այս հարուստ երկիրը՝ օրինաւորապէս ընդ պաշտպանութեամբ Անգղիոյ անցաւ։ 1873ին ինքնիշխան գաղթականութեանց կարգն անցաւ. 1877ին առժամանակեայ կերպով բարեյուսոյ Գլխոյն գաղթականութեան նահանգ մը համարուեցաւ, և վերջապէս 1880ին՝ բնակչաց կամաց հակառակ՝ բոլորովին միացաւ բարեյուսոյ Գլխոյն գաղթականութեան հետ։

Անգղիական կառավարութիւնը՝ նախ և առաջ ջանաց սեպհական ստացուածոց խնդիրը կարգի զնելու. կը փափագէր ժամանակիս սովորութեանց և բարոյից համաձայն վարչութիւնն մը հաստատել. բայց 30,000 լաւ զինեալ և հաստատամիտ անձանց գէմ չկրցաւ ուրիշ բան ընել՝ բայց միայն արձանագիր և դասաւորել արդէն եղածները։ Քիչ վերջը լոկ տեղական իշխանութեան նման բան մը կազմուեցաւ որ «Mining – Board» անունը կրեց. հասարակաց ապահովութեան հսկողութիւնն, տրոց հաւաքումն, շըլակայ վայրաց ներքին և արտաքին բարեկարգութիւնն այս վարչութեան պարտցն էին. իրաբանչեր հանկ իւր «Mining – Board» ունէր։ Այս վարչութեան շնորհիւ առանձնականաց ինչ ինչ զեզմունք ի սպառ չնշուեցան. բայց մասնաւորապէս շատ բացայայտ և խիստ օրինօք կարգաւորեցաւ ապամանզի վաճառականութիւնը։ Յայտնի տեսնուեցաւ որ գողցուած աղամանզներու թիւն շատ մեծ էր, և հանքառէրը այս վտանգն հեռացնելու համար՝ ստիպուեցան յիշաւի բարբարոսական և բռնագիյն միջաներու զիմել։ կարուածառեարց ըրած միահամուռ հաշուէ մը կը աեսնուի որ գոնուած աղամանզներու 100ին 25ը կը գողցուէր. հետևաբար յիշեալ միջոցներն շատ հարկաւոր էին. օտարական մը միայն հանքին տիրոջմէն կամ նորա գործակալէն կրնար աղամանզը գրնել, 'ի ներկայութեան երկուց վլայից, տեղույն գտառաւորէն վլայագիր մ'առնելով՝ յորում մանրամասն նկարագրուած պէտք էր ըլլալ բարին յատկութիւնն։ Այս ալ բաւական չնամարելով՝ ծատեալ գործակալներ որոյուեցան, որոց պաշտօնն էր մտերմաբար գործաւորաց հետ յարաբերութեան մէջ մըսնել. և եթէ գոնուէր օրինազանց մը՝ քանի մը տարի շղթայակասպ աշխատութեան կը գտառապարտուէր։

Այս կարգագրութիւնը որչափ ալ խիստ և ծայրայեղ ըլլային՝ սակայն գարձեալ լիուին իրենց նպատակին չհասան. աղամանզի գողութիւնը միշտ 100ին 45 մեաց։ Եւ այս մինչև ցամ 1879։ Անարգասաւոր կամ անօդուած ժայռերու փոխադրութիւնը՝ 1878 յուլիս 5է ց1879 յունիս 30

արժեքը էր 2,700,000 ֆռ. աղամանզներու հանգերու մէջ աշխատութիւնը ո՛չափ յառաջէր և խոր երթար՝ այս ժայռերն ալ այնշափ առելի կը բազմանային. ուստի այս անօգուստ կտորները պէտք էին այլուր փոխադրել զործին արգելք շրջալու և գործարորաց կեանքն ապահովելու համար. և սակայն այսու հանգերձ զեռ գործարորաց կեանքն լիուլի ապահովութեան մէջ չէր: Ժայռերու կցամց այս անհասատալի աճումն՝ բազմաթիւ մտածութեանց և հոգածութեանց առիթ կ'ըլլար. պէտք է այս ալ դիտել՝ որ հանգային աշխատութիւնը մեծամեծ գործիքներու պէտք ունէին. ածուխը 600—800 ֆռ. կ'արժէր առ մի տակառաշափ. վասարի գետափունք այլ ևս զուրկ էին 'ի անկոց և 'ի բուսականութենէ. և 16 ձիոց գորութեամբ շափաւոր շարժիչ մեքենայ մը՝ որ յԱնդրիա 15,000 ֆռ. կ'արժէր՝ 'ի Քիմազրլէյ փոխադրութեան ծախուց պատճառաւ 35,000 ֆռ. կ'արժէր:

Ստիպողական և տագնապալից էր վայրկեանն. զանազան միջոցներ փորձեցին՝ բայց ամէնն ալ 'ի դերև եղան: Բայց վեռ ամենակարևոր միջոց մը կար՝ այսինքն ամէն հանգատելքը պէտք էր միահնային ստորերկեայ աշխատութիւնը կարգադրելու համար. սակայն այս փորձն ալ ապարդիւն մնաց: 488 5ին՝ նշանաւոր գէպքը մը հանգիպեցաւ. Երկաթուղին հասեր էր մինչև 'ի Քիմազրլէյ. յանկարծակի ամէն բանի գինն ինկաւ. օրինակի համար ածխոյ զինն իջաւ 200 ֆռ. առ տակառաշափ: Հանգերու և պեղմանց գործունէութիւնն և աշխատութիւնց կրինապատկեցան. հին զրութեամբ շարունակելն անկարելի թուեցաւ. ուստի բոլոր հանգատէրք ընկերութիւնն մը կազմեցին. փոխանակ առանձնական շահերու՝ հասարակացն սկսան մոտածել: Ահա այսպէսով աղամանզի աշխատութիւնն ալ ճարտարագործութեան ճիւլ մը համարուեցաւ. ամենայն ինչ շոշշարժ գործիներով կը կառարուի, բոլինդպակ հանգերը՝ մի միակ ընկերութեան ձեռքն են. յայսոնի է թէ այս ընկերութիւնն աշխարհիս ամենէն աւելի հարուստ և զօրաւորաց մին է. զրամազուին է 3,950,000 սոկոլին, այսինքն 98,750,000 ֆռ. Այս գումարն 'ի ոկրան շատ փոքր էր. և չկարծեն ընթերցող թէ հանգին աշխատութեանց բազմանալով՝ բարձրացաւ նաև զրամազուին, այլ ընդհակառակին որպէս զի աղամանզին գինը բարձրանայ՝ աշխատութիւնները շափաւուեցին. մօտերս այս ընկերութիւնը նոր գոնուած մեծ հանց մ'ալ ստացաւ, և բացաձակ տէր է այսօր բովանդակ աշխարհիս աղամանդի վաճառականութեան: Բովանդակ գրութեան մը այսպիսի հիմնական փոփոխութիւն՝ բնականարար զանազան արդիւնք ալ ունեցաւ. նախ և առաջ ընկերութիւնը ըսկրաս մտածել թէ ի՞նչ կերպով կարելի է բոլորովին արգելով աղամանդի գոզավթիւնը՝ որ ստորերկեայ հանգերու մէջ շատ զիւրաւ և մեծ քանակութեամբ կը կատարաւէր: Ուստի խումք խումք բաժնեց իւր մասմորթ գործարուները, և ամէնն ալ բաւական ընպարձակութեամբ երկրի մը մէջ փակեց իրենց հանգերսւն մօտ. այս երկիրն ալ երեք մէզր բարձրութեամբ երկաթէ ծովերով չորս կողմէն պատեց. այսպէսով արգելափակ փոքրիկ գիւղա-

քաղաքներ ձևացան իրենց հիւանդանոցներով, մաքրութեան բաղանիքներով պաշտօնարաններով, և այլն. մէկ խօսքով ամէն տեսակ դիւրութիւն չնորհեցաւ գործաւորաց բաց յարտաքին հաղորդակցութենէ. եթէ գործառը մը մտնէ անդ աշխատելու՝ մինչև պայմանեալ ժամանակը շմացընէ՝ շի կրնար դուքս ելնել. և եթէ համար այն երջանիկ ժամը՝ զարձեալ ուրիշ արգելափակ տեղ մը կը տարուի՝ ուր քառասուն և ութ ժամ պէտք է սպասէ օրինաց պահանջեալ այցելութեանց համար, երբեմն նոյն խոկ մերկ մարմնոյ վրայ՝ եթէ կասկած արթնցընէ զինք քննող պաշտօնէից միաբրը:

Քանի մը խօսք ալ աւեցընենք այս հանգերուն արգիւնաբերութեան վըրայ. ամենէն վերջին հաշուեկիլուն է 1883ինը, յորում յայտնի կը տեսնուի որ վերջին ութ ամաց արդիւնաբերութիւնն եղած է 22,014,945 քառադ. այսինքն 4533 հազարակրամ, և միջին հաշուով 566 հազարակրամ առ մէն մի տարի։ Ասոր վրայ պէտք է յաւելուզ նաև Օրանժի ազատ Պետութեան հանգերուն և գողցուած ազամանգներուն կշիռն. որով 1874—1890 արգիւնաբերութիւնն կրնանք համարի 48 միլ. քառադ։ Այցա անուանական արժեքն է 1680 միլիոն ֆու. խոկ եթէ յաւելունք այն մանր մունք կտորները՝ որք ազամանդի հաստանէն յառաջ կու գան, և գրեթէ 400 միլիոնի արժեքը մ'ունին՝ կը տեսնենք որ զրեթէ 2 միլիոնի արժեէիւք ազամանդի վաճառականութիւն եղած է այս վերջին քան տարիներու մէջ։

Միացեալ նահանգաց վաճառականութեան ճիշդ հաշուեցուցակէն կը տեսնուի՝ որ ամէն տէրութենէ աւելի ինքը գներ է այս ազամանգները մեծաւ քանակութեամբ. այսինքն 1200 միլիոնի շափ.։ Հարսւային Ամերիկա ալ բաւական քանակութեամբ գնած է՝ բայց կը տյամենան զրամական անձուկ վիճակին պատճառաւ՝ տոհպեալ է վերսաին զայն ՚ի վաճառ հանելու ոչինչ գներուի։

Քանի մը խօսք ալ ըսենց հաշակաւոր ազամանդի մը համար, որ ցարդ պտնուած ծանոթներան մէջէն թէ՝ ամենէն գեղեցիկը և թէ ամենէն աւելի մեծն է. կայսերականն է սա, Կուիրեալ Անգլիոյ թագուհոյն և Հնդկաստանի կայսերունուցն. այս ազամանդին սկիզբը կամ ծագումը ոչ ոք որոշակի զիաէ. Դեռ շբանուած՝ 457 քառադ կը կշռէր. զայն կանոնաւոր ձեւի մը վերածելու համար՝ ստիպւեցան 49 քառադ ծանրութեամբ կտոր մը փրցենել. այս փոքրիկ կտորը բանստելէն վերջը՝ 49 քառադ կը կշռէր և 125,000 ֆուի. ծախուեցաւ. մասցեալ կտորէն 180 քառ. ծանրութեամբ թանկազին ազնիւ ակունք մը ձևացաւ. որոյ սոսկ աշխատութեան համար, որ տասնեհնագ ամիս ամեց՝ 37,500 ֆու. ծախք եղաւ։

Այս ազնիւ քարին զինն ի՞նչ է. անկարելի է ըսել, վասն զի անգին է. խոկ պարզ գաղափար մ'առնելու համար՝ կրնանք զայն Գաղղիոյ նախկին թագին ազամանդին հետ բաղպատել. այս քարը զեռ շբանուած՝ 410 քառ. կը կշռէր, խոկ վերջը՝ 136 քառ. Գաղղիոյ արքունեաց ստացուածոց անցեալ դարու հին ցուցակին մէջ սորս արժեքը 12 միլիոն ֆու. նշանակուած է։